

ՏԵՐՏԵՐԴ ու ԻՐ  
ԲԱԼԴԻ ԾԱՌԱԿ

891.715.

Պ-97

MAY 2017

ԱՄ. ԳՐԱԳՐԱԿԱՆ

ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԻՐ ՕՍԼՈՒ  
ՄԱՌԱՆ




001

MAY 2011

Ա.Ս. ՊՈՒՇԿԻՆ

ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԻՐ ԲԱՆՈՒ  
ԾԱՌԱՆ



91.715  
7-97

մ

19 ՀԱՅՊԵՏՀՐԱՏ 37

1913



23 JUL 2013

4898

ՊՈՒՇԿԻՆԸ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

894.715.4. Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ  
Պ-97




# ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԻՐ ԲԱԼԴԻԻ ԾԱՌԱՆ

Թարգմ. Ա.Թ. ԽՆԿՈՅԱՆ  
Նկարները Ա. ՂԱՐԻՖՅԱՆԻ

14124

ՊԵՏՂՐԱՏ  
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊՍՏԱՆԵԿԱԿԱՆ ԲՍԺԻՆ  
ՑԵՐԵՎԱՆ 1937




Խմբագիր՝ Ռուբ. Չ ա ռ յ ա յ ն  
Տեխ. խմբագիր՝ Լ. Ռ ճ ա ն յ ա ն  
Սրբագրիչներ՝ Հ. Մանուկյան յեվ Հ. Գորգիսյան  
Գրավիտի յիագոր Կ—4522. Հրատ. 4000  
Պատվեր 284, Տիրաձ 3000  
Պետհրատի սպարաւն, Յեւեկան, II Կնունյանցի, Կ

Մի ժխատ տերսեր —  
Հարուստ, տնատեր —  
Վաղ գնաց շուկա,  
Վոր գործը հոգա,  
Հետ դառնա տուն գա:  
Ետ տեր ժխատին  
Պատահեց Բալդին,  
Ասով. «որհնիր, տեր,  
Ի՞նչ կուզես, տերտեր»:  
— Կուզեմ մի ծառա,  
Շատ բան իմանա,  
Ապրի չոր հացով;  
Լինի խոհարար,  
Զիապահ, գուրգար.  
Շատ եժան վարձով:  
— «Ա՛ տեր, ինձ վարձիր,  
Կուզես քար բարձիր.  
Մի կլոր տարի  
Ինձ տանդ պահի.  
Թե ուտիս, թե պաս,  
Տուր ինձ լող սպաս.  
Ու տարվա վերջին  
Քո տանը միջին  
Թող միջամատով  
Յերեք հատ կրտսց

Տամ քո ճակատով,  
Ահա իմ վարձը —  
Վերջացած հարցը:  
Տերտերը խորեց,  
Ճակատը քորեց.  
Կրտսոցները իրա մեջ  
Բան չըհաշվեց, տասմ' հեշ  
Կրտսոց ել կա, կրտսոց ել  
Յեվ մոռացվեն գուցե ել:  
Համաձայնեց պայմանին  
Յեվ տուն բերեց ծառային.

Ինչպես ցույց տվավ փորձը,  
Բալդին գիտեր իր գործը.  
Արի լեբ մարդը,  
Վարում եր արար,  
Պահում եր նա ձին,  
Հասնում եր հնձին,  
Նա քիչ եր քնում,  
Շուտ եր վեր կենում,  
Շուկա լեբ գնում,  
Տան պաշար առնում,  
Տանը ջուր կրում,  
Ոջախը վառում,  
Վրան ձու խաշում,  
Խաշում ու կպճում,  
Յերբեք չեր վիճում:  
Հիացել եր իրիցկինը.  
Վրան ցավում եր աղջիկը.  
«Հայրիկ» կանչում տան փոքրիկը,  
Վոր նստում եր Բալդու գիրկը:  
Տերտերը միայն  
Չեր սիրում նրան.



Յերբ հիշում եր Բալդու մատը  
Ճըքճըքում եր ծեր ճակատը:

Տարին անցնում է որեոր,  
Իսկ տերտերը, մտամուրը,  
Վնչ ուտում է, վնչ էլ խմում,  
Տարվա վերջին է սպասում:

Ահա մի որ  
Խեղճ ու մուրը  
Են քահանան  
Իրիցկինկան  
Խոստովանեց  
Ամեն մի բան.

Իրիցկինը՝ — «չես թույլ չեմ տա,  
Ա՛ տեր, Բալդին ճակատիդ տա.


Յեկ զիր նրան այնպես գործի  
Վոր նա իրա ուժը փորձի,  
Են գործն անել չկարենա  
Ու ամօթով դատարկ գնա»:

Ուրախացավ են տերտերը. —  
Իսկույն է եթ — հենց նույն որը  
Ասավ. «Բալդի, սատանեքը  
Դեռ չեն տվել տնորհները,  
Գնա — ուզիր ապառիկ»,  
Յերեք տարեն առնելիք»:

Բալդին մի հեզ  
Ծառայի պես  
Կեսը կամա,  
Կեսն ալամա,  
Յերավ գնաց ծովի քովը  
Թոկն վոլորեց, կախեց ծովը.  
Խիստ փոթորիկ ծովում հանեց,  
Ափը ափին տվեց խառնեց.


Մի քիչ հետո հանկարծ — ահա,  
Ծովից լելավ մի սատանա.  
— Ի՞նչ ես ուզում, Բալդի, մեզնից,  
Թոկդ քաշիր, հանիր ծովից:  
— Չե, ձեր ծովը չես կըխառնեմ  
Ու բոլորիդ դուրս կըհանեմ,  
Ձեր վրալի ապառիկը,  
Իմ տերտերի առնելիքը  
Եսպես լերկար լերեք տարի  
Ի՞նչու համար դուք չեք բերի.  
— Չերիք խառնես ծովը, Բալդի,  
Ձեռքիդ թոկը խնդրեմ վայր դի.  
Շուտով կըտանք մենք քո հարկը  
Ես ա կըգա իմ թոռնիկը:  
Գնաց պապը. լեկավ թոռը,  
Յեկավ, տվավ գլխին գոռը.  
Մլավելով ինչպես կատուն,  
— Բարև քեզի, ասավ Բալդուն.  
Ես ի՞նչ կարգ է,  
Ես ի՞նչ վարք է,  
Ի՞նչ ուզածը  
Ես ի՞նչ հարկ է.  
Ես ի՞նչ լուր է,  
Մեզ չարերիս  
Ինչ տխուր է,  
Չեչ լսած կա՞ գոնե մեկը —  
Հարկ վճարեն սատանեքը.  
Ե՛, ինչ անենք, կուզես կըտանք  
Բաց մի պայման չըմոռանանք.  
Մինչև ժողվի պապս հարկը,  
Իերի լցնի կաշե պարկը,  
Արի վազենք մենք միասին

Ծովի շուրջը. ճամբի կիսին  
 Ով վոր հոգնի ու լեա ընկնի,  
 Թող նա վոսկու պարկը տանի:  
 Մի հռնաց ետտեղ Բալդին  
 Ծաղրի տալով չարի ճուտին. .  
 «Դու ով ես վոր, աչ անհեթեթ,  
 Բալդին վագի քեզպեսի հեա.  
 Քիչ սպասի թող լըղպորը,  
 Գնամ բերեմ իմ լեղբորը»:  
 Բալդին անտառ գնաց արագ,  
 Բռնեց լերկու հատ նապաստակ  
 Յեվ գցելով նրանց պարկը,  
 Դարձավ լեկավ ծովի ափը.  
 Հանեց մեկին պարկի միջից  
 Ու բռնելով շուխտ աղանջից  
 Ասավ չարին. «Վախկոտ ճուտիկ,  
 Խոսքիդ տերն ես, արի մոտիկ.  
 Առաջ վագիր դեռ լեղբորս հեա.  
 Ի՞նչ ես նալում վրան խեթ-խեթ.  
 Դե՛ն մեկ, լերկուս, լերեք՝ վագեք,  
 Դուք իրարի լավ կըսագեք»,  
 Ու վագեցին. նապաստակը  
 Փախավ անտառ, մտավ ծակը.  
 Իսկ սատանեն՝ տնկած դունչը՝  
 Շրջան տալով ծովի շուրջը  
 Քրտնաթաթախ և վագե վագ,  
 Շունչը կտրած և հազիվ հազ,  
 Բարին տալով իր մի վոտը՝  
 Իրան գցեց Բալդու մոտը.  
 Յեվ ինչ տեսավ են լղպորը—  
 Բալդին շուրում ե լեղբորը.  
 «Ապրի, ապրի իմ մոր բալեն»,



Խիստ հոգնել ե զիլ վազելենս:  
Սատանեն եր՝ փոքրիկ ճուտը,  
Փորին տալով լերկար տուտը,  
Ասավ. — Գնամ բերեմ հարկը  
Վոր լցրել ե պապս պարկը:  
Գնաց թողը պատմեց պապին,  
Թե հաղթվեց ծովի ափին:

Բալդին նորից  
Թոկն վոլորեց,  
Կախեց ծովից,  
Խիստ փոթորկից  
Ձայներ լեկան  
Ծովի տակից:  
Մի ալլ հնարք գտավ պապը  
Յեվ ուղարկեց թողին ափը.  
Թողը լեկավ, ասավ Բալդուն.  
— Հերիք խառնես մեր ծովը դուն,  
ես ինչ կարգ ե,  
ես ինչ վարք ե,  
Գու ուզածը  
ես ինչ հարկ ե.  
ես ինչ լուր ե,  
Ինչ տխուր ե,  
Իմացած կա՞ դոնե մեկը —  
Հարկ վճարեն սատանեքը.  
Ե՛, վոր կուզես, մենք ել կրտանք  
Բայց մի պայման չըմտունանք:  
Մեզնից հեռու — գետնի վրա,  
Վրտեղ կուզես, նշան արա.  
Ձեռքիս փայտը ս՛վ մեզանից,  
Դեն շպրտի են նշանից,  
Թող նա տանի վոսկու պարկը —



Յերեք տարեն ժողված հարկը:  
Հը՛, լուխեցար,  
Տես վախեցար  
Թե՛ղ շարդի  
Վախկոտ Բալդի:—  
«Հա՛, վախեցա թե՛ս շարդի.  
Հլա լեզվին ես լակոտի,  
Հլա մտիկ պուճուր շանը:  
Ա՛յ, էն ամպն ե իմ նշանը:  
Փայտդ ենտեղ լես կընեստեմ.—  
Այնուհետև լես ձեզ գիտեմ»...  
Սատանեն եր՛ փոքրիկ ճուտը,  
Փորին տալով լերկար տուտը,  
Լեղապատառ ընկավ ծովը,  
Շունչը առավ պապի քովը  
Յե՛վ լեղածը ծովի ափին  
Նա կցկտուր պատմեց պապին:

Բալդին նորից  
Թոկն վոլորեց  
Կախեց ծովից,  
Խիստ փոթորկից  
Չայներ լեկան  
Խոր հատակից:  
Դարձյալ լեկավ են լղպորը.  
— Ա՛յ անիծվի ես մեր որը,  
Բալդի, ունեմ և մի նոր բան...  
«Սուս, կաթնակեր, չքոտ, անբան,  
Հերթն իմն ե, ասավ Բալդին  
Են աներես չարի ճուտին.  
Տեսնում ես դու՛ են մատակ ձին  
Արածում ե ջուկ, առանձին.  
Յեթե նրան բարձրացընես,

Չեռքերովդ կես վերստ տանես,  
Չեզ կըբաշխեմ ետ ձեր հարկը,  
Դատարկ կերթամ մեր աշխարհքը»:  
Սատանեն եր ետ խոսքի հետ  
Հասավ ձիուն, իսկույն և եթ  
Առավ նրան իր ձեռներին.  
Չուր տալով ջուխտ ծնկներին.  
Բայց լերկու քայլ դեռ չըփոխած,  
Փովեց գետնին, սաստիկ դողաց.  
«Ժուլիկ, մուլիկ չար սատանա.  
Վրադ հողոց սի՛վ կըկարդա,  
Վեր կաց, վեր կաց, չարի ճուտիկ,  
Աչքերդ բաց ու ձին մտիկ,  
Դու չըտարար ինձ ձեռներով,  
Յես կըտանեմ ես վոտներով».  
Ասավ Բալդին ու ձին հեծավ,  
Վոտների մեջ նրան առավ,  
Մի վերստ տեղը իսկույն անցավ,  
Փոշին լելավ, դուճան դառավ.  
Ետտեղ դարձյալ չարի ճուտը՝  
Չըհասկանալով Բալդու սուտը,  
Լեղապատառ ընկավ ծովը,  
Շունչը առավ պապի քովը,  
Իր տեսածը ծովի ափին  
Նա կըցկտուր պատմեց պապին:

Բալդին նորից  
Թոկն վոլորեց,  
Կախեց ծովից,  
Խիստ փոթորկից  
Չայներ լեկան  
Խոր հատակից.  
Հնարք չըկար. սատանեքը

931  
Հավաքեցին իրանց հարկը,  
Շաղկած բերին Բալդու մոտը  
Մեղա գալով ընկան վոտը,  
— Ա՛ռ ուզածդ, գնա՛, ասին,  
Միայն հանգիստ տուր մեր գասին։

Բալդին լեկավ անքանքալով,  
Վոսկին մեջքին զնդզնդալով։  
Վա՛յ իմ որին՝ տերտերն ասավ, —  
Թուավ տեղից, տեղ չըգտավ,  
Կնկա փեշի տակը մտավ,  
Բալդին նրան փեշի տակից  
Քաշեց հանեց՝ բռնած միրքից.  
Ասավ. «Բերի լես քո գանձը»  
Տարվա վերջն ե, տուր իմ վարձը»  
Են տեր ժլատը  
Բռնեց ճակատը  
Բալդին մի հետ կրտասացրեց,  
Նրան սոորքը թուցրեց.  
Մի անգամ ել կրտասացրեց,  
Լեզուն բերնում լռեցրեց.  
Վերջն ել վոր չըկտասացրեց,  
Խեղճ տերտերին զժվացրեց.  
Ժլատ ծերուկ, ես քեզ մի դաս,  
Եժանության ել ման չըգնս.  
Ասավ Բալդին ուրախ, ուրախ  
Յերավ զնաց անվարձ, անհախ։


1831



169

ԳՐԱԸ 50 Կ.

А. С. ПУШКИН  
СКАЗКА О МЕРТВОЙ ЦАРЕВНЕ И СЕМИ БОГАТЫРЯХ  
ГИЗ АРМ. ССР ЕРЕВАН



100

№ 50 4.

А. С. ПУШКИН  
СБОРКА О МЕРТВОЙ ЦАРЕВНЕ И СЕМЬИ БРАТЦЕВ  
1903 г. 170 л. 100 экз.

ՀՀ Ազգային գրադարան



NL0398321

4898